

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱՎԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԶԱՆՔԵՐՆ ՈՒՂՎԱԾ ԵՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄԱԿՅԵԼՈՒՆ»

Հունիսի 14-15-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, աշխատանքային այցով գտնվում էր Բելգիայի Թագավորությունում:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ ինչպես Բելգիայի, այնպես էլ՝ Եվրամիության ղեկավարների հետ: Մասնավորապես, Իրակլի Դարիբաշվիլին հանդիպումներ ունեցավ Բելգիայի Թագավորության վարչապետ Ալեքսանդր Դե Կրոյին, Ներկայացուցիչների պալատի նախագահ Էլիան Թիլբրի, Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրահանձնակատար Օլիվեր Վարդեի հետ, Բրյուսելում մասնակցեց «Europalia» միջազգային փառատոնին եւ Վրաստանի Անկախության տոնի հանդիսավոր միջոցառմանը:



Հանդիսավոր միջոցառմանը իր խոսքում Վրաստանի վարչապետն անդրադարձավ Եվրամիության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱՎԿԼԻ ԿՈՐԱՆԻՉԵ. «ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ ՎԵՐՉ ՄԵՆՔ ԿԱՎԱՐՏԵՆՔ 12 ԿԵՏԻՑ ԲԱՂՎԱՅԱԾ ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄԸ»

«Վրացական երազանք» կառավարող կուսակցության նախագահ Իրակլի Կորանիժեն հայտարարեց, որ 12 կետից բաղկացած պլանով նախատեսված բոլոր բարեփոխումների իրականացումը կավարտվի հունիսի վերջին՝ հույս հայտնելով, որ Եվրոպական խորհուրդը դեկտեմբերին արդար որոշում կկայացնի:

դի կողմից կայացվելիք քաղաքական որոշումը արդարացի կլինի: Ցավոք սրտի, անցյալ տարի Եվրոպական խորհուրդը հիասթափեցնող որոշում կայացրեց մեր հասարակության համար: Հուսով ենք, որ այս դեպքում դեկտեմբերին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

- Հունիսի վերջին երկիրը պատրաստ կլինի ստանալ թեկնածուի կարգավիճակ: Հույս ունենք, որ դեկտեմբերին Եվրոպական խորհրդի

ՎՐԱՍՏԱՆ - ԳԵՐՄԱՆԻԱ

ԻՐԱՎԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ-ՕԼԱՖ ՇՈԼՑ ՐԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱՎԱՐԳՈՒՄ ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷՆ

Գերմանիա կատարած աշխատանքային այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Բեռլինում հանդիպեց Գերմանիայի դաշնային կանցլեր Օլաֆ Շոլցի հետ:

Հանդիպմանը Իրակլի Դարիբաշվիլին Օլաֆ Շոլցին մանրամասն տեղեկատվություն հաղորդեց Եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների կատարման գործում զգալի առաջընթացի մասին, խոսեց նաեւ Վրաստանին Եվրամիության անդամ երկրի կարգավիճակ տալու կարելիության մասին, նշելով, որ Վրաստանը սպասում է թեկնածուի կարգավիճակին տարեվերջին:

Իրակլի Դարիբաշվիլին եւ Օլաֆ Շոլցը խոսեցին նաեւ երկու երկրների միջեւ սերտ գործընկերության ու բարեկամական հարաբերությունների, տարածաշրջանում եւ աշխարհում անվտանգության միջավայրի մասին, անդրադարձան Վրաստանի Եվրատվանային ինտեգրմանը եւ վերջին տարիներին ձեռք բերված առաջընթացին:



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին և Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը խոսեցին նաեւ երկու երկրների միջեւ սերտ գործընկերության ու բարեկամական հարաբերությունների, տարածաշրջանում եւ աշխարհում անվտանգության միջավայրի մասին, անդրադարձան Վրաստանի Եվրատվանային ինտեգրմանը եւ վերջին տարիներին ձեռք բերված առաջընթացին:

ՆԱԽԱՉԵՆՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՒՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Ե ՄԻԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Հունիսի 12-ին, երկրի կառավարության նիստում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանում փոխնակ մայրությունը թույլատրելի կլինի միայն Վրաստանի քաղաքացիների համար, եւ այդ հարցի կարգավորման համար օրինագիծը արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը:

- Հարց, որն անհանգստացնում է հասարակության մեծ մասին: Որոշ ժամանակ առաջ՝ ժողովրդագրական խնդիրներով աշխատող խորհուրդ ստեղծեցինք: Խնդրահարույց հարցերից մեկը, որն ընդգծվել է, փոխնակ մայրությունն է եւ դրա հետ կապված խնդիրները: Դուք գիտեք, որ օտարերկրյա քաղաքացիները վերածվել են բիզնեսի, եւ վերջին տարիներին այդ հարցում ընդհանրապես որեւէ կարգավորում չկա: Մեր քաղաքացիներին, տիկնանց առաջարկվում է, այսպես կոչված, սպառողական բիզնես. դրանից հետո ոչ ոք չգիտի, թե ո՞վ է տանելու այստեղ ծնված երեխային,

որոշ ժամանակ առաջ՝ ժողովրդագրական խնդիրներով աշխատող խորհուրդ ստեղծեցինք: Խնդրահարույց հարցերից մեկը, որն ընդգծվել է, փոխնակ մայրությունն է եւ դրա հետ կապված խնդիրները: Դուք գիտեք, որ օտարերկրյա քաղաքացիները վերածվել են բիզնեսի, եւ վերջին տարիներին այդ հարցում ընդհանրապես որեւէ կարգավորում չկա: Մեր քաղաքացիներին, տիկնանց առաջարկվում է, այսպես կոչված, սպառողական բիզնես. դրանից հետո ոչ ոք չգիտի, թե ո՞վ է տանելու այստեղ ծնված երեխային,

որոշ ժամանակ առաջ՝ ժողովրդագրական խնդիրներով աշխատող խորհուրդ ստեղծեցինք: Խնդրահարույց հարցերից մեկը, որն ընդգծվել է, փոխնակ մայրությունն է եւ դրա հետ կապված խնդիրները: Դուք գիտեք, որ օտարերկրյա քաղաքացիները վերածվել են բիզնեսի, եւ վերջին տարիներին այդ հարցում ընդհանրապես որեւէ կարգավորում չկա: Մեր քաղաքացիներին, տիկնանց առաջարկվում է, այսպես կոչված, սպառողական բիզնես. դրանից հետո ոչ ոք չգիտի, թե ո՞վ է տանելու այստեղ ծնված երեխային,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

ՃՈՒՆԻՐՈՎ ԹԲԻԼԻՍԻ ՈԱՖԻԿ ԱՐԱՋԱՆՅԱԼԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ



Հունիսի 8-ին Երեւանում անցկացվեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի ընդլայնված նիստը: Նիստի աշխատանքին մասնակցեց եւ Եվրոյթ ունեցավ Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը:



Ինչպես հայտարարեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Ջաքարյանը Համահայկական ամառային 8-րդ խաղերը կմեկնարկեն 2023 թվականի օգոստոսին, բացման արարողությունը տեղի կունենա Գյումրիում, իսկ առանձին մարզածեերով մրցումները կանցկացվեն Երեւանում, Վանաձորում, Արտաշատում, Էջմիածնում, Հայաստանի մյուս քաղաքներում:

Լացել է ինչպես մարզածեերի, այնպես էլ՝ մասնակիցների թիվը: Առանձնակի ընդգծվեց այն փաստը, որ Համահայկական խաղերի 20-ամյա պատմության ընթացքում խաղերի մասնակիցների թիվը քառապատկվել է, եւ ներկայումս այն հասնում է ավելի քան վեց հազարի: Այս տարի խաղերին մասնակցելու հայտ ներկայացնողների թվում են Թբիլիսի, Ախալքալաքի, Նինոծմինդան, Ախալցխայի, Բաթումի...


Նիստում նշվեց, որ նախորդ խաղերի համեմատությամբ, ավելի

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԵՎՈՆՈՄԻԿԱ

ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅՊԱՆԵԼ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԴՐԱՎԱՆ ՄԻՏՈՒՄԸ

Հունիսի 10-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին գլխավորությամբ, անցկացվեց տնտեսական խորհրդի նիստ, որտեղ քննարկվեցին ընթացիկ տնտեսական նախագծերն ու ապագա ծրագրերը:



Մասնավորապես նշվեց, որ չնայած առկա մարտահրավերներին, Վրաստանի տնտեսությունը

ըն պահպանում է կայունություն, եւ 2023 թվականի ապրիլին (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԻՆՉԵՎ 2013 ԹՎԱԿԱՆՆ ԱՐՏԱԴՐՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆ ԿՍԱՀՄԱՆԱՓՈՎԿԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՍԱՀՄԱՆԱՓՈՎԿԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿԱՐԳԵԼԿԻ

Հունիսի 12-ին, Վրաստանի կառավարության նիստում, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին անդրադարձավ երկրում, առանձնապես մեծ քաղաքներում օդի աղտոտվածության խնդրահարույց թեմային, նշելով, որ շրջակա միջավայրի ազգային գործակալությունը՝ իրականացրած ստուգումների արդյունքներով, ներկայացրել է մտահոգիչ տեղեկատվություն, ըստ որի, մասնավորապես՝ Թբիլիսիում նորմերի գերազանցում է գրանցվել 25 տեղանքից 13-ում, իսկ որոշ փողոցներում թույլատրելի նորման կրկնակի գերազանցված է:

- Ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են քաղաքներում Թբիլիսիում եւ այլ խոշոր քա-

ղաքներում Բաթումիում, Քութայիսիում, Ռուսթավիում, Չեստա-Թբիլիսիում եւ այլ խոշոր քա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԶԱՆՔԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄԱԿՅԵԼՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թայն թեկնածուի կարգավիճակի ստացման գործընթացին, նշելով, որ Վրաստանը դարձել է Եվրամիության անդամ դառնալ ցանկացող երկրների առաջատարներից մեկը:

- Իսկապես, վերջին տասնամյակի ընթացքում մեզ հաջողվել է իրականացնել այնպիսի պատմական կարևոր խնդիրներ, ինչպիսիք են ասոցացման համաձայնագրի ստորագրումը, Եվրամիության հետ առանց վիզայի ռեժիմի ձեռքբերումը, ազատ առևտրի համաձայնա-

գիրը եւ դառնալ առաջատարներից մեկը, երկիր, որ ցանկանում է դառնալ Եվրամիության անդամ: Եվրամիությունը Վրաստանին շնորհեց ԵՄ անդամակցության հեռանկարը, որը Վրաստանի ժամանակակից պատմության ամենամեծ արտաքին քաղաքական ձեռքբերումն է: Այս որոշումից հետո մենք ջանք չենք խնայի՝ մինչև տարեվերջ ԵՄ-ի թեկնածուի կարգավիճակ ստանալու: Եւ Վրաստանի արեւմտյան ինտեգրման բոլորովին նոր փուլ սկսելու համար:

Ամբողջ պատասխանատվությամբ ցանկանում եմ եւս մեկ անգամ հաստատել մեր հանձնառությունը՝ իրականացնել Եվրոպական հանձնաժողովի բոլոր առաջնահերթ առաջարկությունները եւ ստանալ թեկնածուի կարգավիճակ: Մենք երբեք չենք շեղվել ընտրված ուղուց եւ ապահովելու ենք, որ Վրաստանի ժողովրդավարական, Եվրոպական եւ բարգավաճ ապագայի ճանապարհին ոչինչ չկանգնի: Մենք հավատում ենք, որ մեր պատմությունը, մշակույթը, արժեքները եւ վերջին ձեռքբերումները մեզ պատրաստել են դիմակայելու ԵՄ ճանապարհին առկա մարտահրավերներին,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:



ԱՄՆ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՏ ԶԵՐԲԱՎԱԿԵՒ Է

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը պաշտոնապես ձերբակալվել է: Թրամփը վերջերս Մայամիի դաշնային դատարան է ներկայացել, որտեղ նրան մեղադրանք է առաջարկվելու: Թրամփը պաշտոնապես կալանավորված է համարվում մինչև մեղադրանքի առաջարկման գործընթացը: Դոնալդ Թրամփին մեղադրանք է առաջարկվել 37 դրվագներից 7 կետով՝ գաղտնի փաստաթղթերի անօրինական օգտագործման համար:

Նշենք, որ դեռևս մայիսին երդվյալ ատենակալներն ԱՄՆ նախկին նախագահին մեղավոր էին ճանաչել՝ 1996 թ.-ին լրագրող Էլիզաբեթ Ջին Թերլոյի հանդեպ սեռական ոտնձգությունների մեջ եւ պարտավորեցրել նրան վճարել 5 միլիոն դոլարի փոխհատուցում:

ՌՈՒՍԱՍՏԱՆ - ՈՒԿՐԱԻՆԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՐԴԵՆ ԶՈՂՎԵԼ Է 225 ՀԱԶԱՐ ՌՈՒՄ ԶԻՆՃԱՌԱՅՈՂ

BBC-ի փոխանցմամբ՝ Ուկրաինա լայնածավալ ներխուժումից հետո զոհված եւ վիրավոր ռուս զինծառայողների թիվը հասել է 225 հազարի:

Նաեւ, «BBC»-ն գրում է, որ իրականում պատերազմում զոհված զինվորների թիվը, հավանաբար, շատ ավելի է:

Ե՛վ Ռուսաստանի, ե՛ւ Ուկրաինայի կառավարությունները չեն հայտնում պատերազմում զոհվածների թիվը:

ԻՏԱԼԻԱ ՄԱՐՍԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԻԼՎԻՈ ԲԵՈՒՈՒՄԱԿՈՆԻՆ

86 տարեկանում մահացել է Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին: Բեռլուսկոնին հունիսի 9-ից գտնվում էր Միլանի Սան Ռաֆայել հիվանդանոցում: Նա ուներ քրոնիկ միելոմոնոցիտալից լեյկոզ:

Սիլվիո Բեռլուսկոնին առաջին անգամ զբաղեցրել է Իտալիայի վարչապետի պաշտոնը 1994 թվականին եւ դրանից հետո ղեկավարել չորս կառավարություն՝ մինչև 2011 թվականը:

BRICS 20 ԵՐԿԻՐ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԻԱՆԱԿ ՄԻՎՎՈՐՄԱՆԸ

BRICS-ին միանալ ցանկացող երկրների թվաքանակը շարունակում է աճել եւ արդեն հասել է զրեթե երկու տասնյակի:

Նշենք, որ ներակա դրությամբ BRICS-ի կազմի մեջ են մտնում Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը եւ Հարավաֆրիկյան Հանրապետությունը:

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻԶԵ. «ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ ՎԵՐՉ ՄԵՆՔ ԿԱՎԱՐՏԵՆՔ 12 ԿԵՏԻՑ ԲԱՂՎԱՅԱԾ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տեմբերին կկայացվի արդար քաղաքական որոշում,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

Անդրադառնալով Եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների կատարման գործընթացին՝ Իրակլի Կոբախիձեն նշեց, որ բեւեռացումը խնդրահարույց կետ է եւ որ բեւեռացումը չի կարող ավարտվել բարեփոխումներով, դրա համար անհրաժեշտ է նվազեցնել արմատականությունը ընդդիմության մեջ, թեեւ ընդ-

դիմությունն այս ուղղությամբ քայլեր չի ձեռնարկում:

- Մենք ամուր դիրքորոշում ունենք բոլոր թեմաների շուրջ: Յուրաքանչյուր կետի վրա աշխատանքները կավարտվեն մինչև հունիսի վերջ: Իհարկե, բեւեռացումը խնդրահարույց կետ է: Բեւեռացումը չի կարող ավարտվել բարեփոխումներով, այն պետք է նվազեցնի ընդդիմության արմատականությունը: Ցավոք, այս ուղղությամբ կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվում: Ինչ վերաբերում է այն կետերին,

որոնց համար մենք պատասխանատու ենք, դրանք բարեփոխումներն են, պաշտոնյաների ընտրությունը: Մենք ավարտել ենք կամ կավարտենք բոլոր համապատասխան կետերը մինչև հունիսի վերջ: Բնականաբար, մենք անընդհատ տեղեկատվություն ենք փոխանցում մեր գործընկերների հետ բարեփոխումների ընթացքի մասին: Համապատասխանաբար, մենք թափանցիկ ենք բարեփոխումներ իրականացնելու առումով, երկրորդ՝ տեղեկատվու-



թյունը տրամադրվում է, իհարկե, մեր պարտականությունն է հնարավորինս տեղեկացնել մեր կուսակիցներին, եւ մենք դա կատարում ենք,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒՆ ՄԵՏՐԵՎԵԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ



Վրաց նշանավոր պատմաբան, գիտնական, հասարակական գործիչ, ակադեմիկոս, 84-ամյա Ռոին Մետրեվելին ընտրվել է Վրաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ: Նշված պաշտոնում Ռոին Մետրեվելին փոխարինեց Գորգի Կվեսիտաձեն:

Մասնագիտությամբ պատմաբան Ռոին Մետրեվելին ժամանակին Վրաստանի կոմերիտ կենտկոմի առաջին քարտուղարն էր, ապա զբաղվել է գիտական աշխատանքով: Եղել է Վրացական խորհրդային հանրագիտարանի խմբագիր, միջնադարյան Վրաստանի պատմության վերաբերյալ ավելի քան 300 գրքերի եւ աշխատությունների հեղինակ, նրա խմբագրությամբ լույս են տեսել մոտ 100 գիրք ու աշխատություն:

Նորանկախ Վրաստանում Ռոին Մետրեվելին 1990-1991 թվա-

կաններին եղել է Վրաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: 1991-2004 թվականներին զբաղեցրել է Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնը: Նրա ջանքերի շնորհիվ համալսարանը վերականգնեց ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը, որը կորցրել էր 1926 թվականից հետո: Վերականգնվեց նաեւ համալսարանի գիտական մեծ խորհուրդը: Ռոին Մետրեվելին զբաղեցրել է նաեւ Վրաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահի պաշտոնը:

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՒՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է ՄԻԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նակ մայրության մեթոդին, եւ, իհարկե, դա նրանց պետք է թույլ տալ: Սա մի կողմից մեծապես կօգնի ժողովրդագրությանը, եւ, ընդհանուր առմամբ, մենք կարծում ենք, որ այս հնարավորությունը պետք է թողնենք մեր քաղաքացիներին,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի առողջապա-

հության նախարար Զուրաբ Ազարաշվիլին նշեց, որ կառավարության նախաձեռնությունը, ըստ որի՝ փոխնակ մայրությունը թույլատրվելու է միայն Վրաստանի քաղաքացիներին, կտարածվի նաեւ արտամարմնային բեղմնավորման վրա:

- 2024 թվականի հունվարի 1-ից սահմանափակվում է ինչպես արտամարմնային բեղմնավորումը, այնպես էլ՝ փոխնակ մայրությունը վերարտադրողական տար-

բեր մեթոդներով ոչ Վրաստանի քաղաքացիների համար,- նշեց Զուրաբ Ազարաշվիլին եւ հավելեց, որ օրենքի նախագծով կկարգավորվեն հարցեր, որոնք կարող են «ուղեկցել չկարգավորվող շուկային»՝ նշված ուղղությամբ:

Նրա խոսքով՝ օրինագծում արդեն իսկ նշում կա, որ երկրում արգելվելու են փոխնակ մայրության եւ արտամարմնային բեղմնավորման հետ կապված գովազդները:

ՀԻՇՏԱՍԿԻ ԽՈՍՔ

ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԿՂԱՌՆԱՐ 67 ՏԱՐԵԿԱՆ...



Ծանրահարթակի մեծանուն վարպետը ծնվել էր 1956 թվականի հունիսի 13-ին, Լեւոնապետ /այժմ՝ Գյումրի/ քաղաքում:

ԾԱՆՐԱԶՈՂԻ ՎԱՐՊԵՏԻ ԱՅՍ ԾՆԵՂՅԱՆ ՕՐԸ ՀԻՇՏԱՍԿԵՑ ԱՌԱՆՑ ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՐՏՍԵՐ ՈՐԴՈՒ

Հունիսի 13-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան (2014-2017) Յուրի Վարդանյանը կղաճառ 67 տարեկան: Մարդ, ով իր եւ իր ժողովրդի անունն արդեն իսկ փառավորել էր ծանրամարտում սիրվելով համայն հայության ու ողջ մարզաշխարհի կողմից: Իր 15-ամյա կարիերայի ընթացքում Յուրի Վարդանյանը օլիմպիական խաղերի, աշխարհի յոթակի, Եվրոպայի հնգակի, ԽՍՀՄ քառակի չեմպիոն, համաշխարհային 43 ռեկորդի հեղինակ, տարբեր մրցաշարերի 111 ոսկե մեդալակիր էր...



Մայքլ Վարդանյան

14 տարեկանից զբաղվել է ծանրամարտով: Յուրի Վարդանյանի քաղաքական կենսուղին սկսվել էր Հայկական ԽՍՀ գերագույն խորհրդի անդամությամբ: 2009 թվականին նա նշանակվել էր Հայաստանի նախագահի խորհրդակալ, իսկ 2013 թվականին՝ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար: Ապա անցել էր դիվանագիտական աշխատանքի, եղել է Վրաստանում Հա-

յաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան: Իսկ կյանքի վերջին տարիներին՝ 2017-2018-ին աշխատեց Լուս Անջելեսում (ԱՄՆ) Հայաստանի գլխավոր հյուպատոսարանում:

Մեծանուն գործիչը մահացավ 2018 թվականի նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ում, հուղարկվելով Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնում:

Յուրի Վարդանյանն ամուսնացած էր, երեք որդիներից մեկը: Դժբախտաբար, որդիներից կրտսերը՝ բասկետբոլիստ, 26-ամյա Մայքլ Վարդանյանը, անցած տարի զոհ գնաց «Կոլիդ-19-ին»:

«Վրաստան» թերթը իր վշտակցությունն է հայտնում Յուրի Վարդանյանի այրում՝ Էլեոնորա Վարդանյանին, որդիներին՝ Նորայրին ու Դավիթին, կրտսեր որդու եւ եղբոր՝ Մայքլ Վարդանյանի վաղաժամ մահվան կապակցությամբ, ցավակցում հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ԴԵՏԶ Է ԴԱՂՊԱՆԵԼ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԴՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

արձանագրվել է 7,5 տոկոս տնտեսական աճ, իսկ այս տարվա հունվար-ապրիլին տնտեսական աճի միջին ցուցանիշը կազմել է 7,3 տոկոս: Ապրիլ ամսին արտահանման ծավալն աճել է 20,4 տոկոսով, իսկ 2023 թվականի առաջին եռամսյակում գրոսաշրջությունից եկամուտների աճը գերազանցել է 100 տոկոսը:

Նիստում առանձնակի ընդգծվեց, որ երկրում աղքատու-

թյունն ու գործազրկությունը պատմական նվազագույնի են:

Անդրադառնալով գնաճի նվազման դրական միտումներին նշվեց, որ տարածաշրջանում եւ աշխարհում առկա մարտահրավերների ֆոնին, 2023 թվականի մայիսին, տարեկան գնաճը կազմել է 1,5 տոկոս՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 1,2 տոկոսային կետով, ինչը վկայում է գնաճային ճնշման էական նվազման մասին: Նշվեց նաեւ, որ 2023 թվականի առաջին եռամսյակում, բիզ-

նես ոլորտում շարունակվել են դրական միտումները ինչպես ապրանքների շրջանառության եւ թողարկման, այնպես էլ գրառվածության ուղղությամբ:

Իրակի Ղարիբաշվիլին տնտեսական խորհրդի անդամների ուշադրությունը բեւեռեց օտարերկրյա անմիջական ներդրումների ծավալի ավելացման վրա, նշելով, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում երկրում գրանցվել են գրեթե կես միլիարդ դոլարի անմիջական օտարերկրյա ներդրումներ:

- Ուզում էի եւս մեկ անգամ նշել, որ մենք ունենք շատ դրական միտումներ տնտեսության ուղղությամբ: Այս մասին տեղեկություն ունի բնակչությունը, մեր հասարակությունը: Հատկապես բարձր ցուցանիշ են պահպանում ուղղակի օտարերկրյա ներդրումները: Առաջին եռամսյակում Վրաստանում գրանցվել է գրեթե կես միլիարդ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ինչը, իհարկե, շատ դրական է, սաաց վարչապետը:



ՈՒԹ ՏԱՐԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ



21 զոհ, երկու անհետ կորած եւ հազարավոր տուժած քաղաքացիներ... հունիսի 13-ի աղետից ութ տարի է անցել:

2015 թվականի ջրհեղեղը ավերեց բնակելի տներ, ճանապարհներ, կամուրջներ, թունելներ, հենապատեր, կապի համակարգեր: Ամբողջությամբ հեղեղվեցին «Սզիուրի» եւ կենդանաբանական այգու տարածքները: Աղետի հետեւանքով զոհվեց կենդանաբանական այգու բնակիչների մի մասը: Տուժեցին քաղաքի ենթակառուցվածքները, այդ թվում՝ Վակե-Սաբուրթալո կապող վերգետնյա անցումը, Կոչորի-Սամաղո կապող ճանապարհը, Ախալաբա-Օղնեթի ճանապարհի հատվածը:

154 ՆՈՐ ԱՎՏՈՐՈՒՄ՝ ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Վրաստանի կառավարությունը ծրագրել է գնել 154, ութ մետր երկարության ատվորուներ: Վարչատնտեսական իրակի Ղարիբաշվիլու հավաստմամբ՝ նոր ատվորուները հնարավորություն կտան բարելավել տարածաշրջանում բնակչության տրանսպորտային սպասարկման մակարդակը: Ինչպես նշվեց կառավարության միտում, ատվորուների ձեռքբերման համար, պետական բյուջեից ծախսվելու է 53 միլիոն լարի:

Table with 2 columns: Տարադրամ, Լարի. Rows include 1 մտ ղՈՒՄ, 1 ԵՎՐՈ, 100 ՌՈՒՔԼԻ, 1000 ԴՐԱՄ.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ՎԵՏՈՆ ՀԱՂԹԱՅԱՐՎԵՑ

Դեռեւս փետրվարի 23-ին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին վետո դրեց երկրի խորհրդարանական մեծամասնության նախաձեռնած «Ազգային բանկի մասին» օրենքում փոփոխությունների վրա:

Փոփոխությունները նախատեսում էին Ազգային բանկի խորհրդում գործադիր նոր պաշտոնի առաջին փոխնախագահի պաշտոնի ներդրում: Ըստ նոր խմբագրության՝ Ազգային բանկի նախագահի առաջին տեղակալն իր պար-

տականությունները կատարելու է Ազգային բանկի նախագահի բացակայության դեպքում: Հունիսի 13-ին, Վրաստանի խորհրդարանը, լիազույնար միստի մեկնարկում, քվեարկության դրեց նախագահի մոտի-

վազված դիտողություններով վերադարձված օրենքի նախագիծը, որը տապալվեց: Դրանից հետո քվեարկության դրվեց օրենքի նախագծի բնօրինակ տարբերակը: Այն աջակցեց 82 պատգամավոր, դեմ քվեարկեց խորհրդարանի ինը պատգամավոր: Հետեւաբար, նախագահական վետոն հաղթահարվեց, եւ խորհրդարանի նախագահի ստորագրումից հետո այն կմտնի ուժի մեջ:

«ԱՂԱՍՈՒԳԱՐԻՆՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՅ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՅԱՄԲ

Հունիսի 14-ին, Վրաստանի խորհրդարանը՝ 82 կողմ, 2 դեմ ձայներով, երկրորդ ընթերցմամբ ընդունեց «Ապաօլիգարիսացման մասին» օրենքի նախագիծը, որի քննարկմանը նախորդել էր Եվրախորհրդի՝ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունն այս օրենքի նախագծի վերաբերյալ:

Վենետիկի հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ Վրաստանի իշխանություններին խորհուրդ է տրվում հրաժարվել Ապաօլիգարիսացման օրենքի նախագծի վերամայած տարբերակից եւ իրականացնել երկրում օլիգարխիկ ազդեցության դեմ պայքարի գործող համակարգային միջոցառումները: Հիշեցնենք՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ նախընտրում է համակարգված մոտեցում, մինչդեռ Վրաստանի ներկայացրած օրենքի նախագիծը հենվում է «անձնական» մոտեցման վրա:

Վենետիկի հանձնաժողովը կտրականապես չի մերժում «անձնական մոտեցում» բոլոր տարրերը, սակայն նշում է, որ նման մոտեցումը պահանջում է ուժեղ ընթացակարգային երաշխիքներ՝ կանխելու համար մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության խախտումները: Նշենք, որ ապաօլիգարիսացումը Վրաստանին ԵՄ-ի թեկնածուի կարգավիճակ տալու 12 առաջարկներից մեկն է: Վրացական իշխանություններն ասում են, որ ընդունելով օրենքը՝ կկատարեն ապաօլիգարիսացման պահանջը:

COVID - 19

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ԻՐԵՆ ՆՈՐԻՅ ԶԳԱՅՆԵԼ Է ՏԱԼԻՍ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնը, Վրաստանում՝ 2022 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ 2023 թվականի մայիսի 19-ը, գրանցվել է կորոնավիրուսով վարակման 50,8 հազար դեպք:

Հիշեցնենք, որ դեռեւս ընթացիկ տարվա մայիսի 5-ին, առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարել էր կորոնավիրուսի համավարակի ավարտման մասին, դրանով իսկ չեղարկել կորոնավիրուսի հետ կապված միջազգային արտակարգ դրությունը: Հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի տվյալներով՝ Վրաս-

տանում կորոնավիրուսի հայտնաբերման պահից՝ 2020 թվականի փետրվարի 26-ից մինչեւ ընթացիկ տարվա մայիսի 19-ը, երկրում գրանցվել է 1,8 միլիոն վարակման դեպք, ընդ որում, կորոնավիրուսից մահացել է 17,1 հազար մարդ: Հիշեցնենք, որ աշխարհում կորոնավիրուսից վարակման առաջին դեպքը վավերացվել էր 2020 թվականի հունվարի 15-ին: Նույն թվականի հունվա-

րի 30-ից առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարել էր արտակարգ իրավիճակ, իսկ մարտի 11-ից համավարակ: 2020 թվականից կորոնավիրուսից մահացածների պաշտոնական թիվը կազմում է 7 միլիոն մարդ, թեպետ գտնում են, որ իրականում այն շատ ավելի բարձր է: Կազմակերպության տեղեկատվությամբ՝ վարակից մահացել է առնվազն 20 միլիոն մարդ:

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ

ԱՆԱԼՔԱԼՔԻ. ՔՎԱԶՔՊԵՏԱՐԱՆԸ ԸՇՏՈՒՄ Է ՏԱՐԵՐԻ ՎՆԱՍԻ ԶԱՓԸ

Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Սելբրոն Մակարյանի գլխավորությամբ քաղաքապետարանում անցկացվեց տարերային աղետից տուժած ընտանիքների վիճակն ուսումնասիրող տեղական հանձնաժողովի նիստ:



Աշխատանքային խմբերն արդեն սկսել են տուժած գյուղերի դաշտերի ուսումնասիրությունները, որի ավարտին հայտնի կդառնա, թե որքան վնաս է հասցվել 22 գյուղի բնակչությանը: Ախալքալաքի քաղաքապետը ղեկավարում է տարերային աղետի պատճառած վնասի վայրում ուսումնասիրող հանձնաժողովի աշխատանքները եւ հանդիպումներ անցկացնում բնակիչների հետ:

Հիշեցնենք, որ հունիսի 13-ին, Բարալեթ, Կոչիո, Իխտիլա, Մերենիա, Տուրցխա եւ Լոնատուրցխ գյուղերում տեղացած կարկուտն ու տեղատարափ անձրևները ոչնչացրել են բոլոր հացահատիկային մշակաբույսերը եւ վնասել կարտոֆիլի ցանքատարածությունները, ջրով են լցվել տներն ու ֆերմերական տնտեսությունները:

ՆԻՆՈՇՄԻՆԳՅԱՆ ՄԵՂՐԸ՝ ԼՈՆԴՈՆՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԼԱՏԻՆԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Նիոնոնիմայի մեղրը London International Honey Awards 2023 մրցույթում արժանացել է պլատինե մեդալի: Մեղրի նկարագրության մեջ նշվում է՝ այս մեղրի չափորոշիչները բարձր են: «Kody Family-ն (արտադրող ընկերությունը) իր հիմնադրման օրվանից կենտրոնացած է հաճախորդներին բարձրորակ մեղվաբուծական արտադրանք տրամադրելու վրա»: London International Honey Awards-ի պաշտոնական էջում նշված է, որ մրցույթի նպատակն է՝ տեղեկացնել մեղրագործներին, մեղր արտադրողներին, մեղվաբույծներին, վերամշակողներին եւ մանրածախ վաճառողներին, ովքեր օրինական կերպով տարածում են ստանդարտացված արտադրանքը՝ պահպանել եւ բարելավել

իրենց բրենդային արտադրանքի որակը՝ խթանելով բարձրորակ մեղրի արտադրանքի գործածումն ու սպառումը: Մրցույթը կայացել է մայիսի 26-27-ը:

ԾԱԼԿԱ. ՓԼՈՒԶՎԵԼ Է ԴՈՒՇԶԻԻ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՄՈՒՐՁԸ

Ծալկայի մունիցիպալիտետի Դուշի գյուղի 19-րդ դարում կառուցված կամուրջը փլուզվել է: Հունիսի 13-ին, հորդառատ տեղումների պատճառով, վարարել է Խրամ գետը, եւ ջրի առատ հոսքը դարձել է կամարատիպ կամրջի փլուզման պատճառ: Նշենք, որ կամուրջը կառուցվել է երզրումից գաղթած հայերը՝ 1872 թվականին: Կամուրջը կառուցված էր ձվերով, մինչ օրս կանգուն էր եւ երթեւեկելի: Որոշ աղբյուրներում կամրջի կառուցող է հիշատակվում Հովակիմ Մեիրաբյանը: Քարե կամուրջը կապում էր Դուշի գյուղը հարեւան Արծիվան գյուղի հետ:



Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆԶԵԿ 2013 ԹՎԱԿԱՆՆ ԱՐՏԱԴՐՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆ ԿԱԱՅՄԱՆԱՓՈՎԿԻ

ՎՐԱՍՏԱՆԻՑ ԿԱՏԱԼԻՋԱՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՅԱՆՈՒՄԸ ԿԱՐԳԵԼՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

փոնիում, Մառնեուլիում, Խաշուրիում, Ախալցխիսեում եւ Գիսարուրայում: Ասեմ, որ նշված խնդիրն առավել սուր է մայրաքաղաքում, որտեղ ամեն օր տեղաշարժվում են մեծ թվով մեքենաներ, - հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ կառավարությունը ընդունել է համապատասխան որոշում:

- Նախ՝ ուզում եմ հանրությանը հիշեցնել, որ մենք վառելիքի ստանդարտ ենք սահմանել վաղուց՝ մի քանի տարի առաջ, եւ Վրաստան է ներկրվում «Եվրո 5» ստանդարտի վառելիք: Սա, իհարկե, մշտապես վերահսկվում է համապատասխան ծառայության՝ Շրջակա միջավայրի ազգային գործակալության կողմից: Դիզելային վառելիքի վերաբերյալ որոշում ենք կայացրել այս տարի: «Եվրո 5» ստանդարտի դիզելային վառելիքը եւ բենզինը ներկրվում են, որակը պարբերաբար ստուգվում է: Բայց, ընդհանուր առմամբ, հիմնական մարտահրավերներից մեկը այսօր օդի աղտոտվածությունն է, որը կապված է չափազանց շատ անսարք մեքենաների հետ: Քննարկվեց ու որոշվեց հանրապետությունում ներդնել ավտոմեքենաների «Եվրո 5» ստանդարտը: Սա գործնականում նշանա-

կում է, որ կսահմանափակվի մինչեւ 2013 թվականն արտադրված մեքենաների ներմուծումը: Կանոնակարգը մարդատար ավտոմեքենաների համար ուժի մեջ կմտնի 2024 թվականի հունվարի 1-ից, իսկ ավտոբուսների եւ բեռնատարների համար՝ 2025 թվականի հունվարի 1-ից: Մենք դեռ քննարկում ենք սա: Կան որոշ նկատառումներ, եւ մենք ցանկանում համապատասխան ժամանակ՝ բացահայտել հարցի լուծումները, - ասաց վարչապետը:

Նրա խոսքով՝ նշված ժամկետներից երկրում այլեւս չեն կարող հաշվառվել «Եվրո 5» ստանդարտից վատ որակի մեքենաներ, թեպետ ընդունված որոշումը չի ազդի արդեն երկրում գտնվող մեքենաների վրա, քանի որ մեքենաները մուտք են գործել վերաարտահանման եւ տարանցման նպատակով:

Օդի աղտոտվածության կապակցությամբ՝ Իրակլի Դարիբաշվիլին անդրադարձավ նաեւ մեքենաներից կատալիզատորների հանման եւ արտասահման դրանց արտահանման թեմային:

- Արդեն վեց տարի է՝ վառելիքը հնարավորինս վերահսկվում ենք, որակը համակարգված ստուգվում է: Նախատեսվել ենք նաեւ այլ համալիր միջոցառումներ: Ինչպես գիտեք, հիմնական խնդիրներից



մեկը անսարք մեքենաներն են: Որոշ դեպքերում մենք գիտենք, այսպես կոչված, կատալիզատորների հարցը: Մենք ուսումնասիրել ենք հարցը եւ ասել, որ անհրաժեշտ է դադարեցնել կատալիզատորների արտահանումը: Ուստի, առանձին հրամանագիր կիրառարակենք, եւ կարգելվի կատալիզատորներ արտահանել երկրից, քանի որ տխուր իրականություն է, որ մեքենաներից հանում են կատալիզատորները, հետո՝ վաճառում արտասահման: Սա է խնդրի հիմնական պատճառը: Դեռ տեւաբար, կարծում եմ, որ մենք շատ շու-

տով կունենանք արդյունքներ, օդի որակը կբարելավվի այս ստանդարտի ներդրումից հետո: Միաժամանակ, Շրջակա միջավայրի ազգային գործակալությունը կսկսի համակարգված ստուգել նաեւ մեքենաների որակը: Ընթացիկ տարվանից մենք կսկսենք վերահսկել ճանապարհներից թբիլիսիում, Ռուսթավիում, Բաթումիում եւ Քութայիսիում տեսանելի արտանետումների ավելորդ արտանետումներ ունեցող տրանսպորտային միջոցները՝ օգտագործելով հատուկ տեխնիկա, - ընդգծեց Իրակլի Դարիբաշվիլին:

ՈԼՈՐՏ

ՄԱՆ ՄԻՔԱՋԵ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐԸ, ՈՎՔԵՐ ԿՈՎ ՈՒՆԵՆ, ՊԱՆԻՐ ԵՆ ՊԱՏՐՎԱՏՈՒՄ, ԲԱՅՑ...»

ԵՐԿՐԻ ԼՎԱԿՈՒՅՆ ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ ՄԱՔՍԻՄ ԳԻՆՅԱՆԸ, ՄԵԼՍ ԲԴՈՅԱՆԸ, ԱՐԱՐԱՍ ԴԱԶԱՐՅԱՆԸ...

- Որքանո՞վ է խանութում, շուկայում, փաթեթների մեջ կամ առանց փաթեթի վաճառվող տարբեր տեսակի պանիրը որակյալ է, ամենակարելուորը, ամվտանգ առողջության համար:

- Պանրի արտադրությունը բավական բարդ գործընթաց է, նույնիսկ բացառված չէ, որ սկզբնական փուլում որակյալ պանիրը, մինչեւ սպառողներին հասնելը, կարող է փչանալ: Դա կարող է լինել պահեստում, խանութներում, շուկայում պանրի սխալ պահպանումից, ինչպես նաեւ՝ պատրաստած պանիրների տեղափոխման կանոնների խախտման դեպքում: Ներկա դրությամբ, Վրաստանի պետությունը պարտադրում է կաթնամթերքներ արտադրողներին, առնվազն երեք ամիսը մեկ անգամ, լաբորատորիայում ստուգել ու ներկայացանել համապատասխան հավաստագիր:

Իհարկե, դժվար է պատկերացնել, որ կենսաբանական էակ կովը, երեք ամսվա ընթացքում, չի կարող հիվանդանալ: Ամեն օր ինչ-որ բան կարող է պատահել: Ցանկացած քաղաքացի երկրում կաթի լաբորատոր ստուգումներն անց է կացնում ամեն շաբաթ:

- Որքանո՞վ է լաբորատոր ստուգումը մատչելի պանրի պատրաստման գործընթացում:

- Ձարգացած երկրներում լաբորատոր սպասարկումները բավական էժան են՝ 2-ից մինչեւ 10 եվրո: Այդ ստուգումը ներառում է նաեւ միկրոկենսաբանական ուսումնասիրությունը, ներկայացնում է բաղադրիչները (ճարպեր, ածխաջրեր եւ այլն), որն այնուհետեւ ներկայացվում է մթերքի պիտակում: Արդյունքում, ֆերմերներն ավելի հաճախ են դիմում լաբորատոր ծառայություններ:

Իսկ Վրաստանում վերոնշյալ սպասարկման գինը տատանվում է 50-ից 70 լարիի սահմաններում: Համոզված եմ, որ պետությունը

Վրաստանում պանիրը սիրում են այնքան, որքան գինին, շատերի համար լուսաբացը սկսվում է պանրով: Այն ողջ օրվա ընթացքում մախաճաշի, ճաշի, ընթրիքի անբաժանելի մասն է, իսկ պանրից պատրաստված տարբեր ուտեստները զարդարում են ցանկացած միջոցառման սեղանը, լինում է նաեւ, երբ պանիրը մեծ հաճույքով համտեսում են առանց հացի...

Վիճակագրության համաձայն՝ Վրաստանում օգտագործվող սննդամթերքի թվում, պանիրը զբաղեցնում է առաջատար դիրքերից մեկը: Իսկ 2010 թվականից Վրաստանում սկսեցին անցկացնել պանրի փառատոն: Առաջին փառատոնն անցկացվեց Կախեթի Սիդնաղի քաղաքում, որտեղ բոլոր տարածաշրջաններից ֆերմերներն ու գյուղացիները բերեցին տարբեր տեսակի պանիրներ, որոնց գոյության մասին անգամ շատերը չգիտեին: 21-րդ դարի Վրաստանում ավանդականորեն եղել են ու կան պանրի տարբեր տեսակներ՝ «սուլգունի», «հմե-րուլի» եւ այլն:

Փառատոնի անցկացման գաղափարը պատկանում է ճանաչված բիզնես-լեդի Աննա Սիբաձեին: Աննա Սիբաձեն ներկայումս Վրաստանի պանրի արտադրության ասոցիացիայի նախագահն է: Նա իր առջեւ ունի կարելուր նպատակ՝ ուսումնասիրել Վրաստանում պանրի պատրաստման պատմությունը, հնարավորինս զարգացնել այդ ոլորտը: Այսօր իր ուսումնասիրություններում նա հասել է տպավորիչ արդյունքների: Չնայած բազում դժվարություններին, կարողացել է հստակություն մտցնել այդ հարցում: Թեպետ մեր հարցազրույցն Աննա Սիբաձեի հետ սկսեցինք շատ ավելի կենցաղային հարցով:

պետք է կարգավորի լաբորատորիայի հետ կապված գների հարցը, որպեսզի ֆերմերները շահագրգռված լինեն դիմել լաբորատոր ծառայություններին:

Վրաստանում գրեթե բոլորը, ովքեր կով ունեն, պանիր են պատրաստում: Անասուններ են պահում նույնիսկ քաղաքներում, իրենց մասնավոր բակերում: Հաճախ պատրաստած պանիրը վաճառում են հարեւաններին: Դժվար է պատկերացնել, որ նման արտադրողները 18-25 եվրո կծախսեն իրենց արտադրանքի որակի հաստատման համար:

- Իսկ նման դեպքերում ի՞նչ կարելի է ձեռնարկել:

- Որպեսզի վերանայականապես կարգավորվի պանրի որակի հարցը, անհրաժեշտ է, որ պետություն-արտադրող-սպառող եռանկյունը «գործի» համաձայնեցված: Այդ շղթայում ամենակարելուորը սպառողն է: Հենց նրանք կարող են

եւ կառավարությանը, եւ արտադրողներին ստիպել՝ բարելավել պանրի որակը: Սպառողները պետք է միանան եւ պետությունից պահանջեն օգնություն, որպեսզի պանիր արտադրողներն անպայմանորեն ունենան իրենց արտադրանքի որակի հավաստագիրը: Բնականաբար, արտադրողներն ամվերապահորեն կհամաձայնվեն այդ կատեգորիկ պահանջին եւ համապատասխան միջոցառումներ կձեռնարկեն:

Ասացեք խնդրեմ, ի՞նչ խորամանկությունների են դիմում արտադրողները իրենց արտադրանքի շահավետ իրացման համար:

- Բոլորից շատ անհանգստություն են պատճառում այն պանիրները, որոնք վաճառվում են շուկայում: Դրանց որակը չի ստուգվում, հաճախ այն արտադրվում է տեխնոլոգիական խախտումներով: Իսկ դա նշանակում է, որ նման «արտադրողները» դիմում



են, ինչպես նաեւ՝ ծանր էլեմենտներ:

- Եթե հնարավոր է՝ այդ մասին ավելի մանրամասն...

- Երբեք մտածե՞լ եք, որ մարդու օրգանիզմում կապարը կարող է հայտնվել ոչ միայն ավտոմոբիլային արտահոսքերի, ներկերի, ամանեղենի կամ այլ իրերի միջոցով, այլեւ՝ պանրով: Ցավոք, նման բան հնարավոր է այն դեպքում, եթե կովերը արածում են ճանապարհների մոտ գտնվող մարգագետիններում: Իսկ նման պատկեր կարելի է տեսնել ոչ միայն Թբիլիսիի, այլեւ Թբիլիսիի հարակից շրջաններում:

Կապարը, մյուս ծանր մետաղները, ցողի նման ցատում է ճանապարհամերձ մարգագետինների խոտերի վրա: Բնականաբար, նման պայմաններում կաթի երաշխավորված որակի մասին խոսք անգամ լինել չի կարող:

Անընդունելի է նաեւ այն փաստը, որ Վրաստանում որակյալ ու անորակ պանիրը վաճառվում է գրեթե նույն գնով: Ըստ իս, որակն է սահմանելու գինը:

Արտադրողներին (նկատի չունեն բարեխիղճ արտադրողներին, որոնք, ցավոք, քիչ են), պետք է հասանելի լինի այն պարզ գաղափարը, որ անթույլատրելի է սպառողից նույն գումարը պահանջել այն մթերքի համար, որը պատրաստվել է ճանապարհամերձ արտադրայրերում կամ ալպիական մարգագետիններում արածող կովի կաթից: Անորակ պանիրը կարող է դառնալ լուրջ հիվանդությունների ծագման պատճառ: Մասնավորապես, անորակ պանիրը կարող է առաջացնել սիրտանոթային հիվանդություններ, շաքարախտ, աղիքային հիվանդություններ եւ այլն: Ինչպես վիրահատարանում, պանրի արտադրության արտադրամասերում եւս անհրաժեշտ է մանրագրծված միջավայր:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)